



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՆՍԻՎԱՑՈՒՄ



ԻՆՏԵՆՍԻՎԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ


ԳԼԽԱՎՈՐ ՈՒՂԻ

Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության գլխավոր ճյուղերից մեկն է հանդիսանում: 1998-2002 թվականներին ագրոարդյունաբերության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 35%, որից 23-26%-ը բաժին է ընկնում գյուղատնտեսությունը:

Գյուղատնտեսությունը բացառիկ տեղ և նշանակություն ունի երկրի պարենային ապահովության բնագավառում: Ներկայումս առաջին անհրաժեշտության պարենամթերքի ինքնաբավության

մակարդակը գրեթե 60% է: Հանրապետության 915 համայնքներից 866-ը գյուղական է (գյուղերում բնակվում են երկրի բնակչության շուրջ 36%ը): Այսպիսով՝ գյուղատնտեսությունը ռազմավարական կարևոր նշանակություն ունի գյուղական տարածքների զարգացման առումով: Գյուղատնտեսության մեջ զբաղված է 457.4 հազ. մարդ, ինչը երկրի ընդհանուր զբաղվածության 38.9%-ն է, գյուղական բնակավայրերի զբաղվածության 75.2%-ը:


Գյուղական բնակավայրերի բնակչության եկամուտների գերակշռող մասն ստացվում է գյուղատնտեսական արտադրությունից և այդ ոլորտում վարձու աշխատանքից: Հետևաբար՝ այդ



բնակավայրերում աղքատության մակարդակը մեծապես պայմանավորված է գյուղատնտեսական զարգացման վիճակով:

Էկոնոմիկայի արագ զարգացումը, բնակչության աճն, ինչպես նաև ժողովրդի բարեկեցության բարձրացումն ավելի մեծ պահանջներ են առաջադրում գյուղատնտեսական արտադրության համար: Հետևաբար, ժամանակակից արդյունաբերության հետ միասին անհրաժեշտ է ունենալ բարձր զարգացած գյուղատնտեսական արտադրություն:

Գյուղատնտեսական մթերքների նկատմամբ երկրի աճող պահանջները լիովին բավարարելու նպատակով նախատեսվում է ավելացնել գյուղատնտեսության արտադրանքի ընդհանուր ծավալը՝ միաժամանակ բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը և արագ իջեցնելով արտադրանքի ինքնարժեքը:



Խոսելով գյուղատնտեսության ինտենսիվացման մասին՝ պետք է նկատի ունենալ գյուղատնտեսական բոլոր մշակաբույսերի բերքատվության շեշտակի բարձրացումը և անասնաբուծության մթերատվության աճը, յուրաքանչյուր հեկտարի հաշվով արտադրանքի ելքի ավելացումն՝ աշխատանքի արտադրողականության ըստ ամենայնի բարձրացման և արտադրանքի ինքնարժեքի իջեցման պայմաններում միջոցների լրացուցիչ ներդրման, արտադրության կազմակերպման և տեխնոլոգիայի սիստեմատիկ կատարելագործման միջոցով:

Գյուղատնտեսական արտադրությունն ինտենսիվորեն վարել նշանակում է ավելի լավ օգտագործել հողը, վերջինս ճիշտ մշակելու դեպքում բարելավվում է և դառնում է ավելի արտադրողական:

Գյուղատնտեսական արտադրությունն ինտենսիվացնելու գլխավոր միջոցներից մեկը **քիմիացումն** է: Գյուղատնտեսության քիմիացումն ապահովում է արտադրանքի զգալի ավելացում՝ տարածության մեկ միավորի հաշվով, աշխատանքի արտադրողականության աճ և արտադրանքի ինքնարժեքի իջեցում: Արտադրության քիմիացման նպատակն է՝ կատարելագործել արտադրությունը՝ քիմիական հումքի, տեխնոլոգիաների և արտադրանքի ներդրման հաշվին: Արդյունքում, ինտենսիվացնելով արտադրությունը, հնարավոր է դառնում ստանալ նոր տեսակի արտադրանքներ և բարձրացնել վերջիններիս որակը:



Հանքային պարարտանյութերի կիրառումն ապահովում է հացահատիկային մշակաբույսերի բերքատվության աճը, միջին հաշվով մեկ հեկտարից 6-8 ցենտներով, կարտոֆիլինը՝ 40-50, բանջարեղենինը՝ 50-80, եգիպտացորենի հատիկինը՝ 12-15, սիլոսի եգիպտացորենինը՝ 80-100 ցենտներով:



Հաշվարկները ցույց են տվել, որ հանքային պարարտանյութեր կիրառելիս գյուղատնտեսական մթերքների արտադրությունն զգալիորեն ավելացնելու հետ միաժամանակ ծախսումների ավելացումը՝ պարարտանյութերի արժեքը, տեղափոխումը, դրանք հողի մեջ մտցնելու, ինչպես նաև լրացուցիչ բերք հավաքելու և տեղափոխելու հետ կապված ծախսումները մի քանի անգամ ծածկվում են լրացուցիչ արտադրված մթերքների արժեքով: Դրա շնորհիվ մեկ միավոր արտադրանքի արտադրման վրա ծախսվող աշխատանքը և միջոցներն զգալիորեն կրճատվում են, ապահովվում է արտադրության բարձր շահութաբերություն:

Բույսերի հիվանդությունների, վնասատուների, ինչպես նաև մոլախոտերի դեմ տարվող պայքարի պատշաճ կազմակերպման շնորհիվ մեծ են նաև գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման ռեզերվները: Հարկ է նշել, որ ամեն տարի վնասատուների և բույսերի հիվանդությունների հետևանքով, միջին հաշվով, ոչնչանում է բերքի մոտ 15%-ը, իսկ որոշ տարիներին այդ կորուստները հասնում են ավելի զգալի չափերի:

Գյուղատնտեսության արտադրության ինտենսիվացման մակարդակի բարձրացման գործում առանձնակի դեր է խաղում **ջրատնտեսական շինարարությունը**: Ոռոգման զարգացումը ռեալ հիմք է հանդիսանում հողի լրիվ և արդյունավետ օգտագործման համար: Դա գյուղատնտեսական մշակաբույսերի բարձր, կայուն բերք ստանալու կարևոր պայմանն է:

Գյուղատնտեսական արտադրությունն ինտենսիվացնելու հիմնական գործոնների շարքում առանձնապես մեծ է **մեքենայացման** դերը: Գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականության բարձրացման հիմքը գյուղատնտեսության հետագա մեքենայացումը, կոմպլեքսային մեքենայացման կիրառումը և ավտոմատիկայի միջոցների օգտագործումն է, տեխնիկատնտեսական բարձր ցուցանիշներ ունեցող յուրաքանչյուր գոտու պայմաններին համապատասխան մեքենաների համակարգերի արմատավորումը: Գյուղատնտեսատական առաջընթացի հիմնական ուղղությունները երեքն են՝



1. **արտադրության մեքենայացում** – ձեռքի աշխատանքի փոխարինում մեքենայացված աշխատանքի: Սա կոչվում է համալիր մեքենայացում, քանի որ անցել է մեքենայացման տարբեր փուլեր՝ հիմնական տեխնոլոգիական գործընթացների մեքենայացումից մինչև բոլոր գործընթացների մեքենայացում: Այն արտադրությունը դարձնում

է ավելի ինտենսիվ և կատարելագործված: Արտադրության մեքենայացումը տարբեր ձեռնարկություններում ընթանում է տարբեր կերպ: Մեքենայացման մակարդակը գնահատվում է հետևյալ ցուցանիշներով՝

ա) արտադրված արտադրանքի քանակը հարաբերած արտադրանքի ընդհանուր ծավալին,


բ) կատարված աշխատանքի քանակը հարաբերած աշխատանքի ընդհանուր գումարին

2. **արտադրանքի համալիր մեքենայացում և ավտոմատացում** – սա իրենից ներկայացնում է իրար հետ փոխկապակցված սարքավորումների, մեքենաների ներդրում, որը բարձրացնում է արտադրանքի արտադրողականությունը, նպաստում արտադրության ինտենսիվացմանը և մարդու՝ ծանր աշխատանքի թեթևացմանը:
3. **արտադրության ավտոմատացում** – դա մարդու աշխատանքի լրիվ կամ մասնակի փոխարինումն է տեխնիկական միջոցների օգնությամբ: Արտադրանքի ավտոմատացումը կատարվում է մասնակիորեն՝ գործողությունների և գործընթացների ավտոմատացմամբ, և համալիր՝ արտադրության ամբողջական իրականացում առանց մարդու ներգործության:

Գյուղատնտեսական առաջընթացի ներկայիս խնդիրն է՝ անցնել արտադրության համալիր մեքենայացման և ավտոմատացման: Դրա համար պետք է կատարվեն այնպիսի տեխնիկական-կազմակերպչական միջոցառումներ, որոնք հնարավորություն կստեղծեն բավարարելու հետևյալ պայմաններին. արտադրության կատարելագործման և նրանում անընդհատ տեխնոլոգիաների կիրառման պահանջը, բանվորների աշխատանքային պայմանների և բնույթի բարելավման անհրաժեշտությունը, տեխնոլոգիական համակարգերը, որոնց կառավարումն առանց ավտոմատ համակարգի անհնար է դարձնում կատարված գործընթացների արագ ընթացքի կամ բարդությունների պայմաններում, բարդ արտադրական գործընթացների



օպտիմալացումը հնարավոր է միայն ավտոմատացման միջոցների ներդրման պայմաններում:



Գյուղատնտեսություն

Բնակչությանը պարենամթերքով ապահովման խնդիրը պահանջում է իրականացնել մեծածավալ միջոցառումներ և ծրագրեր: Անկախ իր զարգացվածությունից գյուղատնտեսությունը եղել է և մնում է տնտեսության առաջատար ճյուղերից մեկը: Գյուղատնտեսական արտադրության զարգացման նպատակն է բավարարել գյուղատնտեսական մթերքների նկատմամբ բնակչության և գյուղատնտեսական հումքի բազայի վրա աշխատող արդյունաբերական ձեռնարկությունների աճող պահանջմունքները: Գյուղատնտեսության մեջ գործում են նույն տնտեսական օրենքները, ինչ տնտեսության մյուս ճյուղերում: Տնտեսության այս ճյուղի առանձնահատկությունները հետևյալներն են՝

1. արտադրության գլխավոր միջոցը հողն է, ինչն արտադրության այլ միջոցների հետ համեմատած չի մաշվում, իսկ ճիշտ «օգտագործման» դեպքում բարելավվում է վերջինիս որակական հատկանիշները:
2. որպես արտադրության միջոցներ գյուղատնտեսության մեջ հանդես են գալիս կենդանի օրգանիզմներն, ինչպիսիք են կենդանիներն ու բույսերը:



3. արտադրվող ապրանքը մասնակցում է արտադրության հետագա գործընթացին, գյուղատնտեսության մեջ որպես արտադրության միջոցներ օգտագործում են սերմեր, անասնակեր, ինչպես նաև անասնագլխաքանակի մեծ մասը՝ հողի վերականգնման և հողատարածքի մակերեսի մեծացման համար: Այս բոլորը պահանջում է լրացուցիչ նյութական ռեսուրսներ, արտադրական նշանակալի շինություններ և օբյեկտներ:



4. գյուղատնտեսության մեջ աշխատանքային ժամանակաշրջանը համընկնում է ապրանքի արտադրության ժամանակաշրջանի հետ: Գյուղատնտեսությունում արտադրության ժամանակաշրջանն ընդգրկում է այն ժամանակամիջոցները, երբ գործընթացն իրականացվում է մարդու ազդեցության ներքո (վար, բերքահավաք և այլն) և երբ այն իրականացվում է անմիջական բնական գործոնների ներքո (աճ, հասունացում և այլն): Արտադրության և աշխատանքային ժամանակամիջոցների համապատասխանությունը պայմանավորում է գյուղատնտեսական արտադրության սեզոնայնությունը: Վերջինս նշանակալի ազդեցություն է թողնում արտադրության կազմակերպման, տեխնիկայի, աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, և վերջին հաշվով նաև՝ տնտեսության արդյունավետության վրա:

5. աշխատանքի բաժանումը գյուղատնտեսության մեջ իրականացվում է այլ կերպ՝ հողային, աշխատանքային և նյութական ռացիոնալ օգտագործման նպատակներում ձգտում են հասնել բուսաբուծության և անասնապահության ճյուղերի օպտիմալ համադրության և զարգացման

6. կախված այն հանգամանքից, որ գյուղատնտեսության մեջ, որպես կանոն, տեղաշարժվում են արտադրության միջոցներն, իսկ աշխատանքի առարկան մնում է մեկ վայրում, ուստի այլ ոլորտների հետ համեմատած՝ գյուղատնտեսական տեխնիկայի վերազինման բնույթը նշանակալիորեն տարբերվում է: Էներգետիկ ռեսուրսների



պահանջարկն այստեղ ավելի մեծ է, քան որում գյուղատնտեսության աշխարհագրական բաշխումը և արտադրության սեզոնային բնույթն ավելացնում է տեխնիկային և արտադրության միջոցների պահանջարկը:

Գյուղատնտեսության նշված առանձնահատկությունները պահանջում են համապատասխան վերլուծություններ ոլորտի նյութատեխնիկական բազային ձևավորման, արտադրության կազմակերպման և կառավարման, արտադրական ռեսուրսների օգտագործման տնտեսական արդյունավետության որոշման համար՝ սահմանելով տնտեսության այս ճյուղի զարգացման ուղղությունները: Գյուղատնտեսական արտադրության ծավալների ավելացումը հնարավոր է իրականացնել նյութական և ֆինանսական լրացուցիչ միջոցների նպատակային ներդրմամբ՝ ընդլայնելով երկրի (շրջանի) գյուղատնտեսության արտադրական պոտենցիալը:

Գյուղատնտեսության մեջ ներդրումներն իրենցից ներկայացնում են տնտեսական գործունեության (գյուղատնտեսության վարման) իրականացման գործընթացում հիմնական և շրջանառու միջոցների ձեռքբերման երկարաժամկետ ներդրումներ: Հետևաբար, ներդրումները ոչ միայն հիմնական

միջոցների ընդլայնումն է, այլ նաև գյուղացիական տնտեսությունների շրջանառու միջոցների ձևավորման համլրման ծախսերն են: Երկարաժամկետ ներդրումները գյուղատնտեսության մեջ արդարացված են, եթե դրանք նպաստում են եկամտի սոցիալական էֆեկտի ստացմանը:



Վերլուծությունը ցույց է տալիս, որ այսօր անհրաժեշտ է.



1. բարձրացնել գյուղատնտեսական արտադրության կայունության մակարդակը



2. ինտենսիվացնել գյուղատնտեսական արտադրությունը և մեքենայացնել արտադրական գործընթացը



3. ընդլայնել հողի բարելավման աշխատանքները



4. կատարելագործել արտադրության կազմակերպման և կառավարման ձևերը



5. խոշորացնել արտադրության մասնագիտացման և համակենտրոնացման աստիճանը



6. բարելավել գյուղատնտեսական առանձին մթերքների արտադրության տեղաբաշխվածությունը



7. միջոցներ ձեռնարկել գյուղատնտեսական արտադրության արդյունավետության հետագա բարձրացման, գյուղատնտեսական հիմնական արտադրամիջոցի՝ հողի, գյուղատնտեսական տեխնիկայի և աշխատանքի արդյունավետ օգտագործման համար:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻ

Գյուղատնտեսության հեռանկարային զարգացման տեսլականներն են՝



- ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառմամբ առևտրային գյուղատնտեսական կազմակերպությունների, կոոպերատիվների և շուկայական ենթակառուցվածքների հետ ինտեգրված ընտանեկան գյուղացիական տնտեսությունների զարգացում

- պարենային անվտանգության շահերի և ագրոպարենային արտադրանքների արտաքին առևտրի հարաբերական առավելության սկզբունքների իրատեսական համադրմամբ՝ բնակչության պարենային կայուն ապահովում և ագրովերամշակող հատվածի գյուղատնտեսական հումքի պահանջարկի բավարարում


- գյուղատնտեսության մեջ համախառն արտադրանքի ավելացում՝ աշխատանքի արտադրողականության աճի հաշվին, գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվի հարաբերական կրճատում և ոչ գյուղատնտեսական գործունեության բնագավառներում ավելցուկային աշխատուժի մի մասի օգտագործում՝ գյուղատնտեսության սպասարկման և վերարտադրության միջոցով

- բուսաբուծության և անասնապահության ներձյուղային կառուցվածքում բարձր ավելացված արժեք ապահովող գյուղմթերքի արտադրության գերակշռություն
- հանրապետության բնակչության պարենային անվտանգության բարձր մակարդակ, կարևորագույն պարենամթերքի ինքնաբավության ապահովում, գյուղական աղքատության և արտագաղթի կրճատում

Ժամանակակից գյուղատնտեսության զարգացման ուղին արդյունաբերականուցումն է, այսինքն՝ ինտենսիվացման մակարդակի բարձրացումը, ագրոտեխնիկական պահանջների պահպանումն, արդիական տեխնոլոգիաների և կառավարման համակարգերի կիրառումն: Այս խնդրի լուծման ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել.

★ գյուղացիական տնտեսությունների ռեսուրսային ներուժի օգտագործման մակարդակի բարձրացման, մասնավորապես՝ վարելահողերի լիարժեք օգտագործման, արտադրության ինտենսիվացման միջոցով՝ մշակաբույսերի բերքատվության և կենդանիների մթերատվության բարձրացման միջոցառումներ,

★ գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության խթանման, արհեստների, գյուղմթերքի վերամշակման, գյուղատնտեսության սպասարկման կարողությունների ստեղծմանն աջակցության, ագրոգրոսաշրջության զարգացման քաղաքականություն:





Կարևորվում է սերմնաբուծության և տոհմային անասնաբուծության համակարգի զարգացման աջակցությունն, այդ բնագավառում պետական աջակցության ծրագրերի իրականացումն, ինչպես նաև բույսերի պաշտպանության և անասնաբուժական սպասարկման մեխանիզմների կատարելագործումն ու որակի բարելավումն; Անասնապահության և բուսաբուծության զարգացման խնդրի լուծման ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել.

◆ հանրապետությունում գործող արհեստական սերմնավորման կայանների վերազինում, շահագործում ամբողջությամբ,

- ◆ արհեստական սերմնավորման համատարած կիրառում, ոլորտի մասանգեւտների վերապատրաստում, ինչպես նաև փորձի փոխանակում,
- ◆ գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների կանխարգելմանն ու վերացմանը նպաստող համակարգը հետազոտում և նախագծում է՝ հատուկ ուշադրություն դարձնելով գոռնոզ հիվանդություններին (թռչնագրիպ, խոզի գրիպ, խոզերի աֆրիկյան ժանտախտ),
- ◆ բույսերի պաշտպանության, այդ թվում՝ վնասատուների դեմ պայքարի համալիր միջոցառումներ:

Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման գործում կարևոր են.

- ◆ առավել անբարենպաստ գոտիներում հողի մշակությանն ուղղված նպատակային սուբսիդավորման ծրագրերի իրականացման վերականգնումը, ոլորտում օգտագործվող



կարևորագույն ռեսուրսների գների սուբսիդավորման ծրագրի շարունակումը, դրանց կիրառման մեխանիզմների կատարելագործումը,



- ◆ գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների բարելավումը, մասնատված հողակտորների համատեղ օգտագործման ծրագրերի իրականացումը՝ կիրառելով խթանման տարբեր լծակներ (վարկեր, դրամաշնորհներ, պետական ծրագրեր և այլն),

- ◆ խախտված (դեգրադացված) հողերը գյուղատնտեսական շրջանառության մեջ ներառելու ուղղությամբ միջոցների ձեռնարկում,

- ◆ համայնքներում դաշտապաշտպան անտառաշերտերի հիմնում:

Բնական կերահանդակների, մասնավորապես՝ արոտների և խոտհարքերի նպատակային և արդյունավետ օգտագործման խնդրի լուծման ուղղությամբ անհրաժեշտ են՝

- ◆ բնական կերահանդակների օգտագործման արդյունավետության բարձրացման ծրագրերի շարունակում,

- ◆ արոտների և խոտհարքերի համակարգված և արդյունավետ օգտագործման սխեմաների ներդրում,

- ◆ արոտների ջրարբիացման, անցանելիության ապահովման (ճանապարհների

վերականգնման) պետական աջակցությամբ ծրագրերի իրականացում,

- ◆ արոտօգտագործողների կոոպերատիվների ձևավորման խթանում և գործունեությանն աջակցություն:

ՏՆՏԵՍՎԱՐՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ


Ագրարային ոլորտում կիրառվող քաղաքականության մեջ կարևորվում է տնտեսավարման ձևերի կատարելագործումը, մասնավորապես կոռպերացիայի խթանման քաղաքականությունը: Առավել նպատակահարմար են կոռպերացիայի զրագացման հիմնական չորս ուղղություններ.

- 1. օրենսդրության կատարելագործումն ու համալրումը*
- 2. կոռպերացիայի ձևավորման տնտեսական խթանման մեխանիզմների կիրառումը*
- 3. կոռպերացիայի սկզբունքների, առավելությունների վերաբերյալ գյուղատնտեսության մեջ տնտեսավարողների իրազեկվածության մակարդակի բարձրացումը*
- 4. գյուղատնտեսության մեջ կոռպերացիայի ձևավորումը խթանող ինստիտուցիոնալ կառույցների ձևավորումը*

Գյուղերքի իրացման խնդրի լուծման ուղղությամբ նախատեսվում են.

ա) գյուղերքի կանոնակարգված գործող մեծածախ շուկաների ձևավորումը, հավաքման կետերի, գյուղերքի իրացման տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովումը

բ) հանրապետության մեծ քաղաքներում գյուղերքի տոնավաճառների ստեղծումը և դրանց գործունեության ապահովումը,



զ) գյուղմթերք վերամշակողների և արտադրողների միջև երկարաժամկետ փոխշահավետ պայմանագրային հարաբերությունների հաստատում,

դ) գյուղմթերքի արտահանման խթանումը

Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների խնդրի լուծման նպատակով գործողություններն ուղղվելու են.

◆ գյուղտեխնիկա արտադրող և մատակարարող արտերկրյա ընկերությունների հետ բանակցությունների շարունակման արդյունքում՝ գյուղատնտեսության մեջ տնտեսավարողների հնարավորություններին համապատասխան տեխնիկայի մատակարարման մատչելի՝ լիզինգային մեխանիզմների ներդրմանը, մասնավորապես՝ լիզինգի կանխավճարի և տոկոսադրույքի սուբսիդավորմանը,

◆ հանրապետությունում գյուղտեխնիկա արտադրող արտերկրյա ընկերությունների ներկայացուցչությունների, գյուղտեխնիկայի սպասարկման և հավաքման կառույցների ստեղծմանը,

◆ գյուղական համայնքներում գյուղտեխնիկայի համատեղ օգտագործման կառույցների ձևավորման խթանմանը:

Գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործման առումով կարևորվում է գյուղացիական տնտեսություններում ջերմատնային տնտեսությունների ստեղծման խթանումը, որի ուղղությամբ նախատեսվում են.



ա) գյուղացիական տնտեսություններում ջերմատների ստեղծման ծախսերի մի մասի սուբսիդավորում,

բ) ջերմատնային տնտեսությունների կառուցման համար հիմնական սարքավորումների և կառուցվածքային նյութերի ներմուծման ժամանակ հարկային արտոնությունների տրամադրում,

գ) ջերմատների կառուցման համար նպատակային մատչելի վարկերի տրամադրում

Ագրարային ոլորտի կարևոր խնդիրներից է հաշվառման համակարգի բարելավումը: Խնդրի լուծմանը պետք է ուղղել գյուղատնտեսական համատարած հաշվառման ծրագրի իրականացումը, որի նպատակն է գյուղատնտեսության կառուցվածքի, մասնավորապես՝ գյուղատնտեսական նշանակության հողերի, շինությունների, անասնազվաքանակի, գյուղտեխնիկայի, ինչպես նաև ոլորտի առկա ներուժի՝ մարդկային, նյութական և դրա օգտագործման վերաբերյալ հավաստի տեղեկության ստացումը՝ մարզերի և համայնքների կտրվածքով: Հաշվառման համակարգի բարելավման ուղղություններից է գյուղատնտեսական վարչական ռեգիստրի ամբողջական համակարգի ներդրումն, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների հաշվառման և համարակալման համակարգի ներդրումը:

Գյուղատնտեսության կայունացման և զարգացման համար կարևորվում է ոռոգման ջրապահովվածության մակարդակի բարձրացումը, որը հնարավոր է հետևյալ ուղղություններով՝ ջրամատակարարման մեխանիկական եղանակից ինքնահողին անցում և ոռոգման համակարգերում նոր տեխնոլոգիաների, մասնավորապես՝ կաթիլային ոռոգման ներդրում, դրանց արդյունքում՝ ջրի խնայողական ռեժիմների կիրառում:



Երաշխավորված գներ, արդիական տեխնոլոգիաներ

Գյուղատնտեսության հիմնական խնդիրներից է հանդիսանում գյուղմթերքի երաշխավորված գների կիրառման համակարգի ներդրման մեխանիզմների մշակումը, երաշխավորված գների կիրառման իրավասթենսդրական հիմքերի մշակումը և ընդունումը:

Առաջնային խնդիրներից է հանդիսանում նաև բուսաբուծության, անասնապահության ճյուղերում, գյուղմթերք վերամշակող արդյունաբերության մեջ արդիական տեխնոլոգիաների ներդրումն, ինչը հնարավոր է հետևյալ գործիքների կիրառմամբ. նպատակային մատչելի վարկերի տրամադրում, մրցակցային դրամաշնորհային ծրագրերի իրականացում, վարկային ծրագրերում արդիական խթանման բաղադրիչների նախատեսում, ագրարային ոլորտի առանձնահատկություններին համապատասխան՝ լիզինգային մեխանիզմների կիրառմամբ տեխնիկական վերազինում:

Վարկերի մատչելիության բարձրացումը գյուղատնտեսության ոլորտի խնդիրների լուծման լավագույն միջոցներից է հանդիսանում: Այս ուղղությամբ անհրաժեշտ է. ա) վարկերի մատչելիության բարձրացման լավագույն գործիքի՝ տոկոսադրույքների սուբսիդավորման մեխանիզմների կատարելագործումը և ըստ տնտեսավորողների ու գոտիականությամբ տարբերակված մոտեցումներով ծրագրերի իրականացումը, պարենային անվտանգության



մակարդակի բարձրացմանը, տեխնիկական վերազինմանը, արդիականացմանն ուղղված նպատակային վարկավորման ծրագրերի իրականացումը:

ՈԼՈՐՏԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՔԱՅԼԵՐԸ

- ➡ նպատակային և հետևողական ներդրումներ՝ ճանապարհային շինարարության մեջ (հատկապես՝ սահմանամերձ գյուղերը մարզկենտրոնների հետ կապելու համար),
- ➡ համեմատաբար նվազ ծախսերով էլեկտրաէներգիայի կանոնավոր մատակարարման խնդրի հանգուցալուծում՝ արևի, հողմի, երկրի, ընդերքի, ջրի էներգիան արդյունավետ օգտագործելով լեռնային և սահմանամերձ գյուղերում,
- ➡ լեռնային տեղանքին համապատասխան հատուկ գյուղմեքենաների ձեռքբերում և դրանց սպասարկման և հավաքման արտադրության կազմակերպում Հայաստանում,
- ➡ գյուղմեքենք վերամշակող և էկոլոգիապես մաքուր արդյունաբերական փոքր ձեռնարկությունների հիմնում (մասնավորապես՝ գյուղմեքենք վերամշակող կամ դրանից ստացվող սննդամեքենքի փաթեթավորման, սառեցման և պահեստավորման),
- ➡ փոքր արտադրությունների, մասնավորապես՝ գորգագործության, կարպետագործության, ասեղնագործության, բրուտագործության, փայտամշակման, խեցեգործության արհեստանոցների հիմնման խթանում,
- ➡ կենցաղային սպասարկման տեղական փոքր կենտրոնների վերականգնում


Գյուղերի վերամշակումը և արտահանումը խթանելու նպատակով՝

- կիրառել նմուշների ներմուծման մաքսազերծման պարզեցված ռեժիմ,
 - ձևավորել հայկական ապրանքանիշ և կիրառել պետության կողմից մրցունակ ապրանքների պատվերներ,
 - արտերկրի ցուցահանդեսներում պետության աջակցությամբ հայկական ապրանքների առավել գրավիչ տաղավարի ընտրություն և համաֆինանսավորում,
 - տրամադրել երկարաժամկետ վարկեր՝ պետական երաշխիքներով
 - պարզեցնել գյուղերի արտադրության, վերամշակման ասպարեզում կիրառվող փաստաթղթաշրջանառություն,
 - աջակցել վերամշակող արտադրությունների արտադրանքի իրացմանն արտերկրում, ստեղծել արտադրանքի արտասահմանյան աջակցության համապատասխան կառույց,
 - կարգավորել գործունեությունը սահմանային անցակետերում և դրանք համապատասխանեցնել եվրոպական պահանջներին:
- Նշված ուղղություններով միջոցառումների իրականացման արդյունքում սկսվելու է գյուղատնտեսության ոլորտի արտադրողականության աճ՝ գյուղատնտեսական հաստատուն զբաղվածության (բացարձակ) պայմաններում:

Գյուղատնտեսության և գյուղի զարգացումը 2012-2025թթ.

	<i>2012</i>	<i>2017</i>	<i>2021</i>	<i>2025</i>
Գյուղատնտեսության ոլորտում ստեղծված ավելացված արժեք (ՀՆԱ, մլրդ դրամ)	<i>764</i>	<i>1.139.8</i>	<i>1.556</i>	<i>2.088.9</i>
Գյուղատնտեսության ՀՆԱ-ի իրական աճ	<i>9.5%</i>	<i>4%</i>	<i>3.8%</i>	<i>3.5%</i>
Գյուղատնտեսության մասանբաժինը ՀՆԱ-ում	<i>19.1%</i>	<i>17.3%</i>	<i>15.7%</i>	<i>14%</i>
Աշխատանքի արտադրողականությունը գյուղատնտեսության մեջ (հազ. դրամ)	<i>1.67</i>	<i>2.492</i>	<i>3.402</i>	<i>4.567</i>
Աշխատանքի արտադրողականությունը ոչ գյուղատնտեսական ոլորտներում (հազ. դրամ)	<i>4.466</i>	<i>7.173</i>	<i>10.333</i>	<i>14.894</i>
Ոչ գյուղատնտեսական զբաղվածների թիվը գյուղերում (հազ.)	<i>87.33</i>	<i>95.54</i>	<i>105.54</i>	<i>115.54</i>
Գյուղատնտեսության վարկավորում (մլն դրամ)	<i>91.89</i>	<i>166.349</i>	<i>255.707</i>	<i>380.081</i>
Գյուղատնտեսության վարկավորում / ՀՆԱ հարաբերակցություն	<i>11%</i>	<i>13.5%</i>	<i>15.5%</i>	<i>17.5%</i>
Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը	<i>67.9%</i>	<i>74%</i>	<i>82%</i>	<i>90%</i>
Ասլրանքայնության միջին կշռված մակարդակը	<i>56.1%</i>	<i>60%</i>	<i>67%</i>	<i>75%</i>

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ ԽՍՀՄ-ՈՒՄ




Կոլտնտեսություն կամ կոլխոզ ասելով հասկանում են միավորված գյուղացիների կոոպերատիվ կազմակերպություն ԽՍՀՄ-ում, որը, հիմնվելով արտադրության հանրային միջոցների և կոլեկտիվ աշխատանքի վրա, ապահովում է սոցիալիստական գյուղատնտեսական արտադրության կառավարումը հենց կոլտնտեսային մասսաների կողմից, նրանց ստեղծագործական նախաձեռնության ծավալումը: Օրինակ՝ 1976թ.-ին ԽՍՀՄ-ում կար 27.9 հազ. կոլտնտեսություն (ՀԽՍՀ-ում՝ 371):

Կոլտնտեսություններն ստեղծվել են Լենինի կոոպերատիվ պլանի համապատասխան: Կոլտնտեսության հիմնական խնդիրներն են. համակողմանի ամրապնդել և զարգացնել հանրային տնտեսությունը, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը և հանրային արտադրության արդյունավետությունը, կոլտնտեսային արտադրության ինտենսիվացման և տեխնիկայի հետագա վերազինման կոմպլեքս մեքենայացման և էլեկտրաֆիկացման, հողի քիմիացումն ու մելիորացումն իրագործելու ուղիով ավելացնել արտադրությունը և պետությանը գյուղատնտեսական մթերքների վաճառքը, կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ ծավալել մասսայական-քաղաքական լայն աշխատանք:

Գյուղատնտեսական արտադրության հիմնական միջոցներից մեկը՝ հողը, ԽՍՀՄ-ում համարվում էր պետական սեփականություն: ԽՍՀՄ սահմանադրության համաձայն՝ կոլտնտեսություններին այն ամրացնում էին հատուկ ակտով, անվճար և

անժամկետ՝ հավետ օգտագործման համար: Կոլտնտեսությանն ամրացված հողերը կարելի էր ստորաբաժանել հանրային օգտագործման և տնամերձ հողերի: Վերջինս հասկացվում էր կոլտնտեսականների ընտանիքին (ծխին) որպես բանջարանոց, այգի կամ այլ կարիքների օգտագործման համար: Կոլտնտեսության տնտեսական հիմքը կազմում է հանրային սեփականությունը, որը ներառում է կոլտնտեսության ձեռնարկությունները, շենքերը, կառույցները, տրակտորները, կոմբայները և այլ մեքենաները, սարքավորումները, փոխադրամիջոցները, բանող ու մթերատու անասունները, բազմամյա տնկարկները, մելիորատիվ և իռիգացիոն կառույցներն, արտադրված արտադրանքը, դրամական միջոցներն, ինչպես նաև միջկոլտնտեսային, պետական-կոլտնտեսային կազմակերպությունների ունեցվածքն ու միջոցները:

Գործունեությունն իրականացնելու և հանրային տնտեսության հետագա զարգացման համար կոլտնտեսությունն ստեղծում էր հիմնական և շրջանառու արտադրական ֆոնդեր: Դրանք եղել են անբաժան, ենթակա չեն եղել բաշխման և օգտագործվել են միայն նպատակային կարգով: Արտադրության և աշխատանքի կազմակերպման ձևերն ստեղծվել և կիրառվել են՝ ելնելով տնտեսության կոնկրետ պայմաններից, մասնագիտացումից, արտադրության տեխնոլոգիայից և մեքենայացման մակարդակից:



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Սույն Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):